

ՕՐ. ՊԼԵԳՎԷԼԻ ԾՈՒՐՉ

ԱՅԻԹԱԼԱՅԻ

«Լուիզվիլ Հերալտ» թերթին Հոկտեմբեր 28 համարին մէջ կարևոր յօդուածի մը կը հանդիպինք՝ Հայաստանի բարեկամուհի օր. Ալիս Սթուն Պլէքվէլի վրայ, որուն համառօտ բովանդակութիւնն այս է.

Օր. Պլէքվէլ շատ կը սիրէ հայկական բանաստեղծութիւնը, Հայկական կոտորածին «Բարեկամը Հայաստանի» ընկերութեան ամենէն գործունեայ անդամներէն մին էր: Այս ընկերութիւնը կազմուած էր օգնելու համար թրքական մոլեռանդութեան ըրած գոհերուն, և միանգամայն գործ գտնելու Ամերիկա ապաստանարան մը փնտոտողներուն: Եւ շատ հետաքրքրուեցաւ մեր ազգային բանաստեղծութեամբ. իր թարգմանութեանց փոքր հատորը այնչափ մեծ յաջողութիւն գտաւ որ երկրորդ տպագրութիւնը սկսաւ, առաջնոյն լոյս տեսնելէն 15 օր վերջը:

Հայկական բանաստեղծութեան մէջ ամենէն սիրածն է Պետրոս Իորեանի երկը, «երկաթագործի մը որդի յիւսկիւտար. եւրազլից պատանի մը որ հիւժմարտէ մեռաւ»:

Ներկայ հայ բանաստեղծներէն՝ Արշակ Զօպանեանը ամենէն աւելի գնահատուածն է իրմէ:

Օր. Պլէքվէլ բազմաթիւ թարգմանութիւններ ըրած է հայերենէ. և կարևոր աշխատակից մ'է «Armenia» հայաթերթին:

Հ. Թ. ՕՏԱՊԱՇԵԱՆ



ՀՈՎՈՒԱԿԱՆ ԿԱՄ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ

Թ Ո Ւ Ղ Թ Ը



Ալիթալաճ¹, — որ հայ թարգմանչին կամ օրինակողին գրչին տակ եղեր է Արեղահա, — թէ և անձանօթ անուն մը չէ մեզի, այլ նոր է հայ գրական պատմութեան համար, որ չի յիշուիր ո՛չ Հ. Զարբ-հանդեանի «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» գրքին մէջ և ոչ ալ Հ. Տաշեանի «Յուցակ հայ ձեռագրաց» գործին մէջ², Միաբանութեանս ձեռագիրներու հաւաքածոյն, որ լոյս հանած է անցելոյն մէջ զանազան գրութիւններ՝ որոնք կորսուած կը համարուէին, պահած է նաև Ալիթալաճի անուամբ գրութիւն մը, «Ճառ՝ Աթեղահայի Ուտայի եւ պիսկոպոսի» տիտղոսով, որուն ասորի բնագիրը անձանօթ Մնացած է մինչև օրերս³: Յիշեալ ճառը կամ աւելի վարդապետական թուղթը, թէ և փոքրիկ իր ծաւալին մէջ և զուրկ թերևս շատերուն համար գրական մեծ արժէքէ մը, ունի սա-

1. Այդ անունը ասորի լեզուին մէջ կրնայ կարգադրուի Այիթալաճ, Այիթիլաճ, Այիթալաճ, ևն. սակայն Աստեանի ճշգրտանք կը գտնէ Այիթալաճ կամ Այիթալաճ ընթերցումը, որ կը նշանակէ Աստուածաբեր կամ Աստուածակիր. Bibl. Orient. I. էջ 394-5.

2. Հ. Տաշեանը իր «Յուցակ»-ին մէջ կը յիշէ Ալիս. թալա սարկաւազը և անոր վկայաբանութիւնը, բայց ո՛չ Եղեանի պիսկոպոսը՝ որո՞ մասին է խօսքերնիս:

3. Յարգ. Տ. Ն. Բիւզանդացին կարգաւոր գրութիւնս, կարծիք յայտնեց թէ Լաւազն է «Թուղթ» զնկ փոխանակ «Ճառ»ի, նկատելով որ իրօք նամակի կամ թուղթի ձև և սկզբնատրութիւն ունի: Այս կարծիքը ունեցած է նաև Հ. Բ. Սարգիսեան իր հրատարակած «Եւագրի վարք և Մատենադարան» գործին ներածութեան մէջ, էջ ձիւս.

4. Յիշեալ գրութիւնը կը գտնուի մեր Է ճառըսորին (Թ. 822) 34-յն էջերուն մէջ. Գրչութեան թուականը թէ և անտոյց է, սակայն բաւական հին կ'երեմի, համարէն ժԱ-ժԲ զարուն:

կայն մեզի համար իր մեծ նշանակութիւնը, իբրև մին մեր Ոսկեգարու արտադրութիւններէն, և մեր ամենէն նշանաւոր հեղինակներէն մէկուն իբր աղբիւր ծառայած ըլլալուն: Այս տեսակետով է աւելի՛ որ զայն կ'ուզենք մեր ընթերցողներուն ու շարունակեալն առարկայ ընել, յետ ներկայացնելու անոր կենսագրական համառօտ մէկ քանի գիծերը:

Այլթալահ, Քրիստոսի 324 տարւոյն, Ուռհայի կամ Եղեսիոյ եպիսկոպոս էր, յաջորդելով Սաադեսի¹: Տարի մը վերջը (325-ին) կը գումարուէր Նիկիոյ Ա տիեզերական ժողովը, ուր միացած քրիստոնեայ արևելքն ու արևմուտքը՝ բարձրացուտ իր բողոքի ձայնը և հանդիսապէս զատապարտեց Արիոսի ազանդը, նուիրաւործելով հումադոսիկից կամ ի միասին կակեոս (ομοούσιος) բառը, Հոն, նոյն ժողովին Հարց մէջ, կը գտնուէր նաև Այլթալահ, ինչպէս կը տեսնենք նշանակուած եպիսկոպոսաց ցանկին մէջ իր անունը զանազան հնչումներով², Հոն կը ներկայացնէր ան արևելքի ամենէն հեղինակաւոր և հեղեցիներէն մին, նշանաւոր իր քրիստոնէական ժամանակին և առաքելական ծագումով³, և հզօր մրցակից մը Անտիօքի և Աղեքսանդրիոյ՝ իր հռչակաւոր աստուածաբանական դպրոցով⁴, որ սկսած էր ծաղկիլ նոյն իսկ Բ դարէն, և որուն տմենէն փայլուն ներկայացուցիչն եղաւ յետոյ Ս. Եփրեմ ասորին:

Անտարակոյս Այլթալահ նոյն է Խորենացւոյ պատմութեան մէջ յիշուած «Եւթաղ Եղեսիայ»՝ եպիսկոպոսին հետ, որ ճիշդ նոյն ժամանակ և նոյն ճամբով Նիկիա կ'երթար, երբ Ս. Արիստակէս ալ իր հայ եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ կ'ուղևորէր Հոն, և իբրաւ հանդիպեցան կեսարիա քաղաքին մէջ: Այդ երկու անուննց — Այլթալահի ու Եւթաղի — նոյնութեան վրայ գրեթէ տարակուսելու բան չի մնար, երբ նկատենք որ՝ Եղեսիոյ Աթոռին վրայ երբեք Եւթաղ անունով եպիսկոպոս նստած չէ, և Նիկիոյ ժողովին գումարման տարին, 325 ին, Այլթալահ էր անոր եպիսկոպոսը: Հետևաբար «Եւթաղ» անունը սխալ ընթերցում կամ գրութիւն մ'է «Աւթաղ» կամ «Աւթաղաս» անունն, որ զրուած է Նիկիոյ ժողովին Հարց անուններու հայերէն ցանկին մէջ փոխանակ «Այլթալահ»ի:

Պատմութիւնը չափազանց ուշոյ է ասոր մասին. հազիւ հասուցեր է մեզի նունը, և մի քանի նշխարներ անոր կենսագրական գիծերէն: Կոյն դարու ուրիշ մեծորդի դէմքերուն քով, զէթ գրականօրէն, շատ աղօտ ու աննշան կ'երևայ պատկերը ասոր, որ հեռի կրօնական բուն պայքարներէ, աւելի հանդարտ միջավայրի մը մէջ, հովուական պաշտօնին հոգեբուն միայն նուիրուած, չէ ունեցած առիթը ցոյց տալու իր գրական կամ բեմական տաղանդը, որուն իբր նշմար մը հասած է մեզի յի-

1. Chronicon Edessenum. Assemani, B. O. I. էջ 394, 424: Gams. Series episcoporum. Ratisbonae, 1873:
 2. J. D. Mansi, Sacr. Conco. Collectio. II. Florentiae, 1759. — Գեւորցի հրատարակած Նիկիոյ ժողովին Հարց ցանկին մէջ կը յիշուի, էջ 194-5, ճայեքին «Աւթաղաս յՈւռուայէ» 73որդ, ինչպէս ազնուաբար հաղորդեց ինձի Հ. Քարրը. Ի. Վ. Մ'ենեվիշեան. յուն. 'Αειθαλῆς 'Εδεσῶν, 'Αειθαλῆς 'Εδεσσης. լատ. Ethilaos, Aethilaus, Aetholaus, ևն:
 3. Եղեսիա քաղաքը մ'է միայն կը պարծի, հաւասար Անտիօքի, շատ կ'ունենէն քրիստոնէական հաւասար ընդգրկած ըլլալուն, այլ նաև միշտ անոր մէջ հաստատուն Պալատ վրայ, Հակառակ այնքան բուն հալածանք-

ներ կրելուն Պարսիկներէն, որուն համար ուլ կը կուներ «սուրբ, օրհնեալ, բարեպաշտութեամբ զարգարեալ» քաղաք. Assemani Bibl. Orient. I. p. 261, 278, 417. — Theod. Hist. Eccles. III, 26:
 4. Եղեսիոյ զգրոցն կ'ան Բարդեճան, Ս. Պոպիկոս նաև քահանայ, Եւսերիոս Եմեսոցի, և ուրիշներ, Բ և Գ դարերուն: Հոն կար նաև առանձին զգրոց մը պարսիկ քրիստոնէից համար, որոնց եկեղեցական լեզուն ասորիէն էր, ճիշդ ինչպէս մեր մէջ՝ Գ դարուն և Ե.ին բուհեղեցիները:
 5. Մ. Խոր. Պատմ. Հայոց. Բ, Գ. ԶԹ. էջ 375. Վենետիկ, 1881:
 6. Տե՛ս Չորրդ ծանօթութիւնը:

շեալ վարդապետական թուղթը՝ Նախանձաւոր ու հաւատարիմ իր բարձր կոչման, ինչպէս նաև գիտակից անոր պարտականութեանց, եռանդուն քարոզիչ ու ախոյեան մ'եղած է ճշմարիտ հաւատքին, ինչպէս ենթադրել կու տայ իր գրութիւնը։ Էւ այն աղմկալից ժամանակներուն, երբ իրենց դիրքով և գիտութեամբ «կարծեալ սիւնքն եկեղեցւոյ», ինչպիսիք էին երկու Եւանքիստները և ուրիշներ, կը դեղէկէին իրենց ուղղափառ հաւատքին մէջ, սա երբեք չի դարբեցաւ Նիկիական դաւանանքին ամենաջերմ պաշտպաններէ մին ըլլալէն։

Երեսիոյ Փրոնիկոնը, իր արտակարգ համառօտութեան մէջ, կ'աւանդէ թէ՛ հազրւ բարձրացած եպիսկոպոսական աթոռին վրայ՝ շինեց քաղաքին գերեզմանատունը և եկեղեցւոյն հարաւային կողմը, և չորս տարի վերջը (328ին) կարեւոր յաւելուածներ և նորոգութիւններ բրաւ եկեղեցւոյն վրայ՝ իսկ Ս. Եփրեմի վկայութեան համաձայն, Այթիթալան չէ խնայած ո՛ր և է ճիւղ և ջանք՝ ո՛չ միայն կրօնը և բարեպաշտութիւնը ծաղկեցնելու՝ այլ նաև ուսումը և գիտութիւնը զարգացնելու և Գալոցիին փայլը աւելցնելու, որուն օրինակին հետեցեցան վերջը Աբրահամ և Բաբուլաս նշանաւոր եպիսկոպոսները՝։

Սակայն ասորի գրականութեան պատմութեան մէջ չի յիշուիր ընաւ, թէ Այթիթալան եպիսկոպոսը հեղինակ ըլլայ ո՛ր և է գրութեան մը։ Աստեմանի Եղբարը, որ այնքան պրպտող միտքեր եղած են, և ասորի ո՛ր և է գրական աշխատութեան մը ամենազոյզն հատակոտորն իսկ զանց ըրած չեն ամփոփելու և հրատարակելու իրենց Արևելեան Մատենադարանին մէջ, Այթիթալահի մասին ակնարկ մ'անգամ չեն ընէր՝ թէ ո՛ր և է թուղթ մը կամ ճառ մը

գրած ըլլայ, Հաւանօրէն շատ կանուխէն մոռացութեան տրուած կամ կորսուած պէտք է ըլլայ անոր վարդապետական թուղթը, ո՛չ իր քանակովը և ոչ ալ իր գրական արժէքովը մեծ դեր մը կատարելու սահմանուած ըլլալով։ Արդէն անոր ո՛չ յոյն և ոչ լատին թարգմանութեան մը հետքն անգամ չի նշմարուիլ՝ ևս աւելի կը հաստատէ այն ենթադրութիւնը, թէ՛ շատ անծուկ շրջանակի մէջ անցած է յիշեալ գրութիւնը։ Սակայն անոր բովանդակութիւնը, կրօնական տեսակետով կամ վարդապետութեան պատմութեան համար, ունի իր առանձին կարեւորութիւնը։ Իսկ հայերէն թարգմանութիւնը կը պարտինք ապահովապէս դպրի մը կամ պարագայի մը, այն է՝ մեր առաջին թարգմանիչներէն ոճանց — որոնց զխաւորն էր Եզնիկ կողբացին — Երեսիա ղրկուած ըլլալուն իրենց վարդապետներէն, որպէս զի թարգմանեն հոն ասորի հեղինակներուն և Հարց գրուածները և Հայաստան ղրկենն՝։

* * *

Փրութեանս սկզբնաւորութիւնը նամակի ձև ունի։ «Աւետարանիչք բարեաց, քաղոպիչք խաղաղութեան, ևն, ողջոյն և խաղաղութիւն բազմացի ձեզ ի մի ճշմարիտն Աստուծոյ. . . և զօրութիւն շնորհաց նորա ի ձեռն ճշմարիտ Հոգւոյն և ղիցի ընդ ամենեախն՝»։ Այս համառօտ օրհնութեան ողջունէն վերջը, կը սկսի պատմական ոճով յիշատակել հռովմայեցի վերջին կայսերաց հալածանքը քրիստոնէից ղէմ, Կոստանդիանոսի յաղթանակը և դարձը, յարելով անմիջապէս Նիկիոյ ժողովին գումարումը, անոր մէջ հաստատուած հաստոյ դաւանութիւնը, ևն։ Սակայն չի յիշուիր հոն Արիոսի անունը, և ո՛ր և է

1. Ass. Bibl. Orient. I. p. 394. II. p. 37, 170, 394.
 2. Սոկրատ, Եկեղ. Պատ. Բ, 9. Գ, 6.
 3. Կորին, Պատ. Ս. Մեսրոբայ, էջ 32-3, վեներտի, 1894.

4. Սոյն հոգուական կամ վարդապետական թուղթը ուղղուած է հաւանօրէն ասորածէս կամ ասորեկզու պարսիկ քրիստոնէից, որոնց կ'ակնարկէ զընտրեալ ի հեթանոսաց՝ բառերով, և կը քացարք անոնց հաւատոյ զլիւստր մատուցը։

ակնարկ մը չի կայ անոր մուր վարդապետութեան: Յիշեալ հաստոյ դաւանութիւնը, որ հոս Նիկիոյ Ս. Հարց կ'ընծայուի, շատ կը տարբերի Նիկիական հանգանակէն, և բնաւ Ս. Աթանասի ընծայուած հանգանակին կամ անոր վարդապետական Արտայայտութեան հետ նմանութիւն չունի՝. այլ աւելի ընդլայնած, Ս. Գրոց վկայութիւններով ճոխացած, աւելի ճառի մը քան հանգանակի երևոյթն ունի: Ինչ կը յիշուի նաև Չատկին խնդրը, որ նախորդ դարերուն մէջ այնքան կրօնական յուզումներ պատճառած էր, ու արեւելքի մի քանի Եկեղեցիներ, տգիտութեամբ և յամառ աւանդութեամբ մը, Չորհրտասուներորդ կոչուած հերձուածի մը ծնունդ տուած էին, Հրէից հետ նոյն օրը կատարելով Չատիկը: Այս կարևոր խնդիրն ալ, կոստանդինուսի առաջարկին վրայ, որոշուեցաւ նոյն ժողովին մէջ, « և միարանցեան անել ի մի օր Չատիկ, կ'ըսէ Այսիթալան, յորժամ կամօրի յաւելու լոյսն տուրն ջեան ի ժամս իւր քան զժամս իսլաւարին գիշերոյ »:

Սոյն պատմական հատուածէն վերջը՝ կը սկսի բուն վարդապետական բաժինը, որ զբաւած է գրեթէ թուղթին մեծագոյն մասը, ընդհանրապէս Ս. Գրոց վկայութեամբ հաստատելով Երբորդութեան խորհուրդը, Գրիստոսի աստուածութիւնը և մարդկութիւնը, Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը, Ս. Հաղորդութեան խորհուրդը և քրիստոնէսայ կրօնից ուրիշ վարդապետութիւնները, են. առանց սակայն բանական կամ բնական փաստերով ապացուցանելու միշտ ըսածները, ինչ որ կ'ընեն ուրիշ Ս. Հարց: Անկէ վերջը կը սկսի աստուածաբանական և իմաստասիրական կնճռոտ հարցեր մէջ բերել, որոնց լուծումը կը ջանայ տալ Ս. Գրքի վկայութիւններով և կամ բնական փաստերով, օրինակներով և բացա-

տութիւններով: Իբր ապացոյց ասոր՝ մէջ կը բերեմ հետեւալ տողերը, որուն մէջ կը բացատրէ Գրիստոսի « Երթամ և գամ » խօսքը. « Երթալ այն է՝ յորժամ դադարէ յառնելոյ զգորութիւնս ի ձեռն սրբոց իւրոց, և զալն այն է՝ յորժամ ցուցանէ նշանս և արուեստս ի ձեռն արդարոց և ճշմարտից: Իբրև զարեգակն՝ որ ծագէ ի վերայ ամենայնի որ յօղս և յերկրի են և ի ծովու. բազումը են որ ոչ տեսանեն զճառագայթս նորս, լցին որ կոյրը իցեն և իցեն որ ի քուն կայցեն. և որ ունին աչս և արթունը են, տեսանեն զքաղցրահայեաց նշոյլս նորս »: Գեղեցիկ կերպով կ'ապացուցանէ թէ ո՛չ միայն հակասութիւն չի կայ հին կտակարանին և նորին մէջ, այլ մանաւանդ թէ այնպէս ներդաշնակ կերպով միացած են իւրարու, որ մէկը կը լրացնէ միւրը, և հինը անըմբռնելի և թերի պիտի մնար առանց նորին: Կը խօսի Աստուծոյ անսահման էութեան վերայ, թէ ինչպէս կը բնակի « ի լոյս անձինն իսկութեան, և ընդ ամենայն անցանէ նորբ և աներևոյթ զօրութեամբն, և ընդ յմիջ ոչ խառնի և ոչ արգելու, այլ ինքն պատեալ և փակ ունի ընդ իւրև զամենայն »: Այս խօսքերէն կը հետևի բնականաբար այն առարկութիւնը, թէ ինչպէս Աստուած ամենուրեք ըլլալով և մէն բան բովանդակելով իր մէջ՝ անխառն մարմնը կը մնայ անսուրբ արարածներէն: « Որ զայդ ամեն զմտաւ, կը պատասխանէ, նայեաց ընդ արեգակնս՝ որ արարած նորս է, զի ծագեալ ծաւալեալ կայ ի վերայ ամենայնի առհասարակ, ո՛չ ի սուրբ ինչ իրաց սրբի և ոչ ի պղծոցն առնու իսո՞նուած և աղտեղանայ: Սոյնպէս և հուր՝ յոր և մերձեսցի՝ սրբէ և մաքրէ, և ինքն իւրց ոչ աղտեղանայ: Եւ թէ սոքա տնկակիցը և համազինը արարածոց՝ ո՛չ աղտեղոյն աղտեղանան, այլ սրբելով սրբեն, որչափ ևս առաւել անզրնին և անխառնելի զօրութիւնն առաւել սրբելով սրբէ »:

Այս ոճով կը յառաջէ ան, առանց տասանելու բնաւ ո՛ր և է դժուարութեան առ-

1. Enchiridion Symbol. etc. Henr. Denzinger, 1900, Leipzig. էջ 36-7. Հանդանակ հաստոյ. Հ. 8. Գաթրեան. վիճնա, 1891. էջ 25-6, 36-7.

ջև, դիմելով յաճախ նմանութեանց կամ օրինակներու, ուր որ բանական փաստերը բաւական պիտի չըլլան համոզելու կամ ըմբռնելի պիտի չըլլան իր ընթերցողին։ Վերջը հազիւ հարեանցի ակնարկ մ'ընելով նիւթական էակաց, կ'անցնի խօսելու հրեշտակներուն և դիւաց վրայ՝ թէ ինչ քնութիւն ունին, ինչո՞ւ «հուր» կամ «հոյմ» կը կոչուին Ս. Գրքին մէջ, կընան մարմնաւոր իրաց գործողութիւնները կատարել, ևն. ինչպէս «ազատ» և «անձնիշխան» կ'ըստին, քանի որ հրեշտակը չեն կրնար մեղանչել ու սատանան չի կրնար դառնալ իր շարութեանէն։ Կայ ի բնէ չար ու բարի, և թէ ստոնք «անձնի՞նք են թէ արգասիք անձանց» . ինչպէս կրցեր է միանալ հոգին մարմնոյն հետ, երկու աննման և իրարու հակառակ գոյացութիւններ, ևն։ Եւ այսպէս կը շարունակուի շարք մը քնազանցական հարցեցու, որոնք նոյն ժամանակի խորհող մտքերուն տեսակ մը սեւեռումները զարձած էին, նոյն իսկ իմաստասիրական դպրոցներէն դուրս՝ մուտ գտնելով ժողովրդեան դասակարգին մէջ, որուն կ'ուզէ Ս. Հայրս իր ներկայ թուղթը Այդ վերջին քնազանցական խնդիրները, որոնք հոս շատ վեր ի վերոյ շոջափուած են, ընդարձակօրէն կը գտնուին արդէն մեր Եզնիկ կողմէն «Եղծ աղանդոց» զրքին մէջ, որով կարելի է աղբար մը կամ ասնչութիւն մը ենթադրել ներկայ գրութեանս և Եզնիկայ մատենին մէջ, ինչպէս պիտի ցուցուի քիչ վերջը։

Հոս անցողակի ըսեմ որ, Այթթալահի գրութեան առաջին էջը (25—30 տողի չափ), որ կը սկսի « յամի իննետասնե՛րորդի Գիտկղեախանութի և երից ընկերացն՝ որը յարուցին հալածանս ի վերայ ըրիս տոնէից», և կը վերջանայ «քննեցին զգիրս և զբեցին հաւատս թէ՛ մի է Աստուած» ևն, — ուր կը յիշուի Կոստանդիանոսի յաղթանակը, դարձը ի քրիստոնէութիւն և Նիկիոյ ժողովին գումարումը, — գրեթէ բառ առ բառ կը գտնուի Սերէոսի պատմութեան մէջ, ազուցուած այն ընդարձակ

վարդապետական թղթոյն, զոր Ներսէս Գ կաթողիկոսը և հայ եպիսկոպոսունք կ'ուղղեն առ Կոստանդին Բ կայսրը։ Այդ թուղթը ներարդէն մէջը կցկուտոր քաղուած ներ զանազան հեղինակներէ, օր. Պիտոյց զրքէն, Ազաթանգեղոսէն, ևն, ուր յաճախ կրկնութիւններ են, թերի և կրնատ նախադասութիւններ և անկապ իմաստներ։ Հոն արդէն ուշադիր ընթերցողը անմիջապէս պիտի անդրադառնայ, թէ մեր յիշած կտորը եկամուտ է՝ կրկնութիւն ըլլալով էջ մը առաջ ըսածներուն։ Հաւանական է թէ սոյն հասուածը, ինչպէս նաև Պիտոյց զրքէն և ուրիշ քաղուածոյ կտորները, չէին գտնուեր թղթոյն սկզբնագիր օրինակին մէջ, և Սերէոսէն վերջն է՝ որ մ' և է զաղափարող մը, յիշեալ նամակին աւելի հմտական ձև մը տալու և ճոխացնելու համար, ազուցել է անոր՝ ինչ որ նոյն նիւթին վերաբերող կտորներ զրտեր է յարմար կամ անյարմար։

*
**

Վերը մէջ բերուած սակաւ տողերն իսկ բաւական պիտի ըլլան համոզելու, մանաւանդ ո՛վ որ պարապած է հայերէն լեզուին կազմութեան և անոր պատմութեան, թէ Այթթալահի գրութեան թարգմանութիւնը անտարակոյս մեր Սկեդարու շրջանին կը պատկանի, ու հարկ է անկաշուածա ևն մեր թարգմանչաց երիցադոյն դասուն մէջ փնտուել անոր թարգմանիչը։ Կը բաւէ ուշ դնել քառերուն ընտրութեան, անոնց կանոնաւոր և վայելուչ դասաւորութեան, բացարտութեանց յասակութեան և պարզութեան՝ առանց բան մը կորսնցնելու վսեմ և կորովի ըլլալէն, իր այն

1. Սերբոս. Պատմ. Ի Հերակէն. Հրատ. Ք. Պատկան. Պետերբուրգ, 1879. էջ 130-1. Այթթալահէն փոխ առնուած կամ ներմուծուած հատուածը կը սկսի. « Յամի (երկերեւր ութսուն և չորրորդ) կենարարն մերոյ և փրկչին Յիսուսի Գրիստոսի թագաւորէ Գիտկղեախանս » . . . և կը վերջանայ « քննեցին զգիրս, և զբեցին հաւատս ճշմարիտս՝ որ ի Նիկիոյն ակաւարանեցու մեզ » .

կտրուկ և ներդաշնակ ոճին մէջ, — ձիր-
քեր՝ որոնք յասուկ են Մեարոպեան դա-
սակիան լեզուին, որուն իբր օրինակ կը
ներկայանայ Եզնիկ գրքոյկը: Եթէ տեղ
տեղ կը մնան մութ կէտեր, զարտուղու-
թիւններ կամ անճշդութիւններ, որոնք
շատ ցանցառ են համեմատութեամբ, ե-
նոնք թարգմանչին վերագրելի չեն, այլ
օրինակողաց անճշդութեան:

Իսկ թէ ո՞վ կրնայ ըլլալ թարգմանիչը,
թէ և դրական փաստեր չունինք ասոր
պատասխանելու, սակայն և՛թէ ուշ դար-
ձնենք ճառուած նիւթին, վիճարանութեան
առարկայ եղող խնդիրներուն, իմաստնե-
րուն և մանաւանդ բացատրութեանց, ո-
րոնք գրեթէ նոյնութեան կը գտնուին

Եզնիկ (էջ 90-92, 95)

Բայց և զայն ևս պարտիք գիտել, թէ հրեշ-
տակք և դևք և ոգիք մարդկան անմարմինք են.
զի զհրեշտակաց ասէ. «Արար զհրեշտակս իւր
հոգիս և զպաշտօնեայս իւր բոց հրոյ»... Այ-
պէս վասն սաստկութեան բոցեղէն կոչին հրեշ-
տակք, նոյնպէս և վասն արագութեան և սա-
րձմութեան՝ հոգեղէնք, որ է՝ հոգմեղէնք. բայց
բնութեան նոցա ի վեր է քան զհոգու և քան ըզ-
հուր, նուրբ և արագ քան զմիտս:

Եւ Եզնիկի ի հրատեսիլ և բոցալեզու ի կատս
ազգի ազգի կերպարանօք յօդեալ, և կառավար
մարդկակերպարան երևեցուցանէր. քերթէս ազ-
գի ազգի զազանօք յօդեալ, և ձեռն ձգեալ իբրև
զմարդոյ քորթէի, ևն:

Այս համեմատութենէն կ'երևի թէ նոյն
չունեն է՝ որ անցեր է երկու գրիչներու
ժրայէն, մի և նոյն գաղափարները կերպրին
մէջ ալ նոյն կտրուկ և կորովի ե՛տով բա-
ցատրուած. և ինչ որ Եզնիկ թարգմանի-
չը՝ ասորերենին ազդեցութեամբ՝ ըսած է
Ալիթալաւհի մէջ «արար զհրեշտակս իւր
հոգիս», նոյնը՝ Եզնիկ հեղինակը սրբա-
գրած է «Եղծ ազանդոց»ին մէջ «արար
զհրեշտակս իւր հոգիս», ինքն իսկ բացա-
տրելով թէ «ազոյ և հոգմոյ անուն երբա-
յեցեբէն և յունարէն և ասորերէն նոյն
է՞»: Ամէն տարակոյս փարատելու համար՝
թէ Ալիթալաւհի թղթոյն թարգմանութիւնը
Եզնիկայ գրչին արտագրութիւնն է, կը բաւէ

«Եղծ ազանդոց» մատենին մէջ, մեր մըտ-
քին վրայ ըրած առաջին սպաւորութիւնը
կամ ենթադրութիւնը գրեթէ ապահով և-
զրակացութեան մը կը փոխուի, թէ Ալի-
թալաւհի թղթոյն թարգմանիչը ուրիշ մէկը
չի կրնար ըլլալ՝ բայց նոյն ինքն Եզնիկ:
Եւ այս եզրակացութիւնը ամբողջելու պի-
տի ծառայեն այն ցիչ պատմական տեղե-
կութիւնները՝ զոր ունինք իր մասին, այն
է՝ թէ Եզնիկ հաւասարապէս ծանօթ էր
ասորի լեզուին՝ ինչպէս յունարենին, և
ճիշդ այդ էր պատճառը՝ որ Եղեսիա զըր-
կուեցաւ իր վարդապետներէն ասորի Ս.
Հարց գիրքերը թարգմանելու: Հետեւեալ
համեմատութիւնը լիւրջի պիտի հաստատէ
ըսածներս.

Ալիթալաւհի

Իսկ գրնութիւն վերին զօրութեանց և զգի-
ւացն և զշնոց մարդկան չէ հար մարմնաւոր
այաց տեսանել... «Արար, ասէ, զհրեշտակս իւր
հոգմս և զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ»... Ալ-
կոչեցան հուր վասն զօրութեանն զոր ունին, զի
որպէս հրոյ ոչինչ կայ առաջի՝ յորժամ բորբո-
քիցի յայրել, նոյնպէս և ոչ նոցա ինչ առաջի
կարէ կալ... ասին և հոգմ՝ վասն երազ և նուրբ
բնութեան:

Եւ յորժամ երևեցան երբեք երբեք, ոչ միով
կերպարանօք երևեցան. այլ երբեմն ի նմանու-
թիւն քրովբէից, երբեմն ի նմանութիւն կանաչ
և զազանաց, երբեմն իբրև թևաւորք և երբեմն
ի կերպարանս մարդկան, ևն:

կարդալ անոր ո՛ր և է մէկ էջը, ուր պի-
տի տեսնուին լեզուի մի և նոյն դարձուած-
ները, մտքի միևնոյն նրբութիւնը, սա տար-
բերութեամբ միայն՝ որ մինչ Ալիթալաւհի
մէջ ո՛ր և է ինչիւր վճռական կամ վարդա-
պետական ձևի տակ կը ներկայանայ, ա-
ռանց վիճարանելու, առանց իմաստասի-
րական ապացոյցներու, այլ միայն Ս.
Փրքի վկայութեամբը հաստատելով և ա-
ռաջարկելով իբր մասն հաւատոյ. ընդհա-
կառակն, Եզնիկ իմաստասիրական փաս-

1. Եղծ ազանդոց. յէջ 90, 92, 260-1.
2. Եղծ ազանդոց. էջ 90.

տերով գինուած մէջտեղ կու գայ, կը վիճէ, կը կռուի, և չի քաշուիր ապարիզէն, մինչև որ չյաղթահարէ հակառակորդը: Կը բերեմ հոս Այլիթալահի թուղթէն հատուած մը, որ պիտի կարծես ըլլաւ «Էղծ ազանդոց»ին մէկ էջը:

«Եւ մի՛ յորժամ հայիցիս ընդ չափ թանձրու-
թեան և սեղմութեան արարածոց, կարծրցես թէ՛
դժուարին է գորութեանն (Աստուծոյ) անցանել
ընդ նոսա և ոչ խառնիլ. ունիս օրինակ գզունն՝
որ հաստատեալ է ի կերպարանս Արարչին խո-
տուն և իշխանութեամբ. յորժամ շարժի ուրիշ
հաստեալ, եթէ՛ յերկինս և թէ՛ յանդունդս՝ արագ
և անարգել հասանէ, և կարծէ յընչի և յուրնչի
լինել, իբրև չիք հնար արարածոյ լինել բնու-
թեամբ յընչի և յուրնչի, բայց միայն ամենա-
զօր գօրութեանն՝ որ ունի միազգ ի ձեպին գո-
չինչն և գինչն. զի որպէս ի չզոյէ ած ի զոյս, և
սոյնպէս կարող է ի գոյէ աստի ի չզոյն զար-
ձուցանել: Եւ թերևս վասն այսօրիկ ասի իս-
տօզն բնութիւն շնչոյն՝ նմանութիւն Աստուծոյ,
զի որպէս սա կարծեօք կարող է լինել յընչի և
յուրնչի, նոյնպէս Արարիչ բնութեանն ճշմար-
տութեամբ կարէ լինել յընչի և յուրնչի... Բա-
զում անգամ յորժամ լսեմք զազգի ազգի վայրաց
և զքաղաքաց, իսկ և իսկ անդր հասանեմք մը-
տօք և նկարեմք փողոցս և հրապարակս, և ի
վայրսն՝ դաշտս և լեռինս և ձորս և հովիտս. և թէ՛
զէպ վրցի անդր երթալ, ոչ այնպէս գտանին՝
որպէս մտօք նկարեմք: Արդ շունի գնատասօր
պատկեր Արարչին, որ ոչ յորժամ շարժի՝ ապա
հաստիցէ՛ յոր կոյս գիմիցէ՛ երթալ, այլ ճշմար-
տութեամբ և բնութեամբ ի վերայ ամենայնի և
յամենայն տեղիս և ուր չիք տեղիք: Ո՞վ խոքօ
մեծութեան Աստուծոյ, որ հաստատեաց կացոյց
զամենայն արարածս յուրնչի, անքնինս և քնե-
լիս, աներևոյթս և երևելիս, և աննախանձ շնոր-
հեաց ամամարմին և անմահ բնութիւն ամենայն

խօսոնց, և որպէս յորդառաս և անզեղձ յայտ
արար գարեբարութիւն իւր. զի թէ և աննա-
րին ինչ յանցանս ինչ յանցանիցեն իշխան ա-
զատութեամբն, ոչ դարձուցէ զանմահութիւն
նոցա ի մեռելութիւն, և ոչ զկամակար անձնիշ-
խանութիւնս բերցէ իշուսցէ ի տկարութիւն: Եւ
զի՞նչ ստեմ թէ՛ անմահութիւն և իշխանութիւն
շնորհեաց նոցա, ուր գաստուածն և զտէր անուն
ոչ արգել աննախանձ ի խօսուն արարածոց: Եւ
ունի բնութիւն ամենայն խօսոնց խառնուած ի
զննելեաց, այսինքն՝ ի չորիցն բնութեանց, ի
Չերմութենէ և ի ցրտութենէ, ի խոնաութենէ
և ի ցամաքութենէ. զի սոքա անքնիք են և նո-
քա անզնելիք, սոքա երևելիք և նոքա աներե-
ւոյթք, սոքա անցանելոցք և նոքա առանց ան-
ցանելոյ»:

Ո՞վ այս սողերը կարդալով՝ պիտի չու-
նենայ պատրանքը կարծելու վայրկեան
մը, թէ՛ հոս ստորի Ա՛ Հայրը չէ՛՝ այլ նոյն
իսկ Եզնիկն է որ կը խօսի իր մայրենի
լեզուովը, այնքան զգալի է վերի սողը-
րուն մէջ անոր կարովի և անմարանող
միտքը, անոր յստակ և ներդաշնակ լե-
զուն: Ո՞ւր է հոն թարգմանութեան հետ-
քը, ո՞ւր են հոն ստորերեքին ազգեցու-
թիւնը կամ արտուղութիւնը, որոնցմէ ա-
զատ շատ քիչ թարգմանութիւն ունինք:
Հոն կ'երկինս արդէն նմանութեան նշմար-
ները, և անժխտելի է թէ Եզնիկ ներշնչուած
է Այլիթալահի իմաստներէն, և զանոնք
թարգմանելով՝ իւրացուցեր է անոր կար-
ծիրքները և տեսութիւնները: Այդ երևոյթը
աւելի ազներև պիտի ըլլայ հետեւեալ հա-
մեմատութիւններով.

Այլիթալահ

Եզնիկ

Ասին դարձալ բնութիւնը և չորից ստիբիւք,
այսինքն՝ Չերմութիւն, ցրտութիւն, խոնաու-
թիւն, ցամաքութիւն... ասին և բնութիւնք ա-
մենայն մարմնաւորաց որ ի ցամաքի են:

Թէ որպէս ասինն՝ էին հրեշտակք հուր և հողմ,
սակայն չէր նոցա հնար ամուսնանալ ընդ մար-
մնաորս. թող թէ՛ ամամարմինք և անզնիք են...
այլ ընդ մարմնոյ ամուսնանալ և ոչ դիւաց...
զոյ հնար:

Չի թէ՛ յայն հաստեալ էր, և ոչ ի վախճանի
զենեան խոստացեալ լինէր այնմ՝ որ միշտ կա-
տարէ զգործ իւր յոր հաստատեցաւ... և զի թէ՛-
պէտև փորձին գարութիւն իւր գոր էա՞՝ ի
շարութիւն դարձոց, ևն:

Եւ սպասնայ որ չարն կոչի այժմ վասն ապ-

Քանզի մարմին մայրոյ ի չորից տարեց խա-
նեալ է, ի խոնաութենէ, ի ցամաքութենէ, ի
ցրտութենէ և ի Չերմութենէ... որպէս և ամե-
նայն մարմնաւորաց որ ի ցամաքին են (էջ 80):

Չի եթէ՛ ի բնութենէ հողմի և հողի էին...
նր իշխեցին շնչիլ՝ որք ստեմ թէ՛ հրեշտակք
ընդ կնանայ ամուսնացան: Ապա թէ՛ անմար-
մինք էին, չէր մարմն անմարմնոցն ընդ կնանայ
մարմնաւոր ամուսնանալ (էջ 91, 100):

Եթէ՛ այնպիսի արարեալ էր զաւ Աստուծոյ,
պատիծս ի նմանէ չէր պարտ գահահանջել, զի
պահեաց զպայման բնութեանն՝ յոր արարն զնա
Աստուած... ապա եթէ՛ յԱստուծոյ բարեւոք եղև,
և անձամբ յանձնէ դարձոց զկամսն ի չար, ևն.
(էջ 52):

Չսպասան անուն վասն խոտորելոյն էա՞ որ իւր

Արիմալան

Իզլիկ

ստամբող մտացն, զոր ստացաւ ինքն իւրով կամակարծեամբն. չէր ի բնէ չար և չարչարիչ, այլ ինքն կամեացաւ և եղև չար. և ոչ որպէս ումանք բամբասան թէ յայն իսկ հաստատեցաւ զի երկից փորձիչ արդարոք... զի զարդարուն նովաւ գտէ և զուրբուն ի նորա բովան քննէ և պարզէ, և զԲեդաւորացն զաղտն և զժանգն նորա հալոցօքն երևեցուցանէ:

Եւ ոչ զօրութիւն ինչ բռնաւոր է ստանայ, թէ բռնաբար ինչ ապստամբեալ և կամ թէ բռնի զՌժ վարիցէ ի չարիս, այլ պատրուօք և զրգոնելով... և ոչ ունի կանխագիտութիւն, յայնմանէ յայտ է որ խանդիտուէ մարտնչի:

Եւ այսու յայտ է թէ չէք ինչ չար կամ բարի բնութեամբ... և արդարև գեղեցիկ են ամենայն գործք Աստուծոյ... Ունին անձնիշխանութիւն և ազատութիւն, և կարեն գտնաւ կամակար մըտօք ի բարի և ի չար:

Եւ աննախանձ շնորհաց անմարմին և անմահ բնութիւն ամենայն խօսնոց:

Եւ չայն և բարին ոչ եթէ անձինք ինչ են, այլ ի գործոց անուանին որ երբեմն բարիք էին չարք, և որ երբեմն չարք՝ և ապա բարիք:

Որպէս և որչափ առնու հրաման, այնչափ փորձէ (ստատանայ). ի փորձութեանն իմանամբ որովք փորձեաց զՅովք. զի ոչ որպէս և կամեցաւ փորձեաց, այլ որպէս և առ հրաման, և զի ոչ աւելի քան զկար մարդկան փորձէ զնոսա փորձին:

Ասոնց պէս կը գտնուին ուրիշ նմանութիւններ իմաստներու և բացատրութեանց, որոնք եթէ բոլորովին փոխառութիւն կամ բանաբարութիւն ալ չեն, սակայն անժըխտելի կ'ընեն այն կապը կամ առնչութիւնը որ կայ երկու յիշեալ գրութեանց մէջ, որ չի կրնար ուրիշ կերպով մեկնուիլ՝ բայց միայն ենթադրելով թէ Էջմիկի, ասորի Ս. Հօր գրութիւնը թարգմանելու ժամանակ, մտքին մէջ արդէն կազմած ըլլալ իր ապագայ հեղինակութեան ծրագրին մէջ մասը, զոր վերջը ամբողջացուցին է ուրիշ Հարց կամ հեղինակաց գրքերուն ընթերցմամբ կամ թարգմանութեամբը: Եւ իրարցնէ, կարելի է պատահական համարիլ՝ որ երկու գրութեանց մէջ ալ՝ մի և նոյն կարծիքները կամ տեսութիւնները, մի և նոյն իմաստները կամ գաղափարները, գրեթէ յար և նման բառերով և դարձուածներով բացատրուած ըլլան: (Որինակ

անուն... իւր կամօք եղև բանսարկու... իբրև զպատմարբ յետ կացեալ թիւրեցաւ Աստուծոյ (62-3): Եւ ոչ չար և չարչարիչ հաստատեաց զնա Աստուած, և ոչ փորձիչ՝ եթէ նովաւ փորձալ զարդարս զտեսցէ (50): Թուլացուցանէ ըստ չարեաց կամեաց նորա փորձել զառաքինիս, և մըտեալ ի փորձութիւնսն նորա՝ իբրև ի բովս, գտին և ընտրին իբրև զոսկի սուրբ ելեալ ի հալոցաց (182-3):

Չէ ստանայ բռնաւոր և կանխագէտ... և զի չէր բռնաւոր ռք, յայնմանէ յայտ է՝ զի ցըկինն պատրուօք մատուցեալ հարցանէր, և ոչ բռնութեամբ զարհուրեցուցանէր (77):

Չէք ինչ չար՝ որ բնութեամբ չար իցէ (10)... Ուստի յայտ է թէ Աստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ: Ի բարութիւն և ի չարութիւն գտնաւայր զանձնիշխանութիւնն արար կամակար, զի յոր կողմն և կամիցի՝ կարող իցէ դառնալ (173):

Այլ բանաբարաց պարզեաց աննախանձ գանձահութիւն (101):

Եւ այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ յիրաց անտի առնուն զանուանս, նոյնպէս և չարիքն ի դիպացն առնուն զանուանումն (28):

Եւ փորձել այնչափ իխել ստատանայ, որչափ հրաման առնու. և յայտ ի Յովքայ փորձանոցն է. զի եթէ ոչ նախ առ հրաման Աստուծոյ, ոչ ժտեցաւ փորձել զնա... և փորձելոյն այնչափ տայ նմա իխանութիւն, որչափ մարդն հանդուրժել կարէ (181-2):

Իմն. Արիմալան ստանանային համար « չար և չարչարիչ » բացատրութիւնը կ'ընէ, Էջմիկի հէշդ մի և նոյնը կը կրկնէ երեք անգամ իր գրքին մէջ՝ Հաստատելու համար թէ սատանան՝ Աստուծոյ թոյլ տուածին չափ կը փորձէ զմարդիկ, երկուքն ալ Յովքայ օրինակը կը բերեն և միևնոյն հետեանքը կը հանեն: Նոյնպէս միւս խընդիրը, թէ « Չարիքն որք լինին՝ անձինք ինչ իցեն, թէ արգասիք անձանց », երկուքն ալ գրեթէ մի և նոյն փաստերով, օրինակներով և վկայութեամբք նոյն եզրակացութեան կը յանգին, թէ « Ոչ եթէ անձինք ինչ են, այլ ի գործոց անուանին », և այլն:

Կը վերջացնեն խօսքս՝ հետեւեալ եզրակացութեանց գալով թէ, Ա. Արիմալանի

1. Էջմ աղանդոց, յէջմ 50, 100, 186.
2. Անտ. յէջմ 87, 181.

Թուղթը մեր Ոսկեդարու անդրանիկ թարգմանութիւններէն մէկն է . Բ . Այդ զրուութեան թարգմանիչը ուրիշ մէկը չէ՛ քայց նոյն ինքն Եզնիկ Կողբացին . Գ . Թարգմանիչը, իր իսկագիր « Եղծ աղանդոց » մատենին ինչ ինչ ինդիբներուն կամ կրտորներուն մէջ, ներշնչուեր է Արիթալաչի տեսութիւններէն և իմաստներէն :

Հ . Յ . ԹՈՐՈՍԵԱՆ

Աստուած օգնէ քեզի, սիրուն թռչնիկ, ժամանակին օրհնուի բոյնդ քու ձագերովդ : Զքեզ շատ կը սիրեմ, վասնզի գիտես այսպէս լաւ վարել քու կեանքդ, մինչդեռ ես... Ո՞նք մի՛ հարցընիր թէ քնչպէս կ'անցնեմ իմս . կ'ուզեի քեզ նմանիլ :

3200

Jane Carlyle

Տ Ր Ի Պ Ո Ւ Ի Ի

ԻՏԱԼ ԵՒ ԹՈՒՐԻԲ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ա Ն Ա Պ Ա Տ Է Ն

ԱՌ ԵՒԻԲԱՌՆՈՒԿ ՈՐ ԻՐ ՏՈՒՆԸ ՄԵՐ ՏՆՆԵԱՅ
ՆԵՐՔԵԻ ԿԸ ԵՆԷՆ

Պտտեցար՝ պզտի ծածանող մարմնիկ, տեսար աշխարհ և հիմա դու ալ պիտի հանգչեցնես քու յոգնած թեկերդ :

Եթէ կարենայիր խօսել՝ իմ պզտի թռչնիկս, քնչ չեի տար զիտնալու համար թէ ինչո՞ւ հոս ուզեցիր շինել քու բոյնդ : Վասն զի դու դիւթիչ տեղերէ անցար քու թռչնիկներդ ժամանակ — ամբողջ լուստուր աշխարհ մը կը տարածուէր քու ներքեզ, քայց նոր տեսակ ճաշակ քուկդ, այն ամենայն յարմար տեղերէն երկնից տակ՝ քու բոյնդ շինելու՝ ընտրեցիր միայն այս անմիթար տեղը :

Բազդի ձախողութիւն մը ունեցար : Քու պզտի քօսկդ արդեօք թեթեւացած էր, և դու, յոռեզոյնէն վախնալով, հոս ապաիինեցար :

Ո՞նք, ո՞չ, դու ոսկիի պէտք չունիս, դու երջանիկ արարած : Եւ ոչ իսկ զիտես թէ կայ : Աստուծոյ արարածոց մէջ ամենէն աղքատը մարդն է :

Ի՞նչ ելաւ ուրեմն : Խորհրդական դէպք մը արդեօք պատահեցաւ քեզի Գեորգիանիա տանեաց մը տակը՝ որ միջնուց քու աչքիդ աշխարհիս գեղեցկութիւնը, այնպէս որ ծանրաբարոյ և հանդարտ մէկ մը եղար, որ կը ձանձրանայ և կը տըրտնջէ և չգիտեր ինչո՞ւ համար :

Սպալայն տարակոյտ չեկայ որ դու խոշական գլուխ մը ունիս, վասն զի կը տեսնեմ որ կ'աշխատիս, վախճանիդ հասնելու համար, թեկերովդ և կտուղովդ : Պայծառ սկզբունք մը կայ քու պզտի գլխիդ մէջ, և դու կ'աշխատիս, քաշատիրտ թռչուն, ուժով և հաստատամտութեամբ, և ուրիշ բան չես փնտռեր :

Ցիրուի կը հաւատամ որ բնութիւնը քեզի տուած է կատարեալ խիճք մը՝ քու վիճակիդ յարմար : Փոյթ չես ընել որ քու տունը լքախտ մը ըլլայ կամ անապատ, քանի որ կ'ապրիս և կը թռչիս երկնից մէջ :

Կէս տարի յառաջ, Բագմավէպի մեր ընթերցողներուն իտալական միութեան յիանամեակին նշանակութիւնը բացատրած միջոցնիս, ոչինչ ճաղաքական հորիզոնին վրայ թոյլ չէր տար զուշակել վերահաս պատերազմը : Այսուհանդերձ դէպքերն այնպէս եկան որ իտալիա իր միութեան յիանամեակին շատ մօտէն վերախուճեցրուաւ նենայ յիտուն տարի յառաջ իրեն կրած զգացումներուն : Կը մեռնէր յետին մնացորդը 1859ի մեծ դռամին, ժէրոմ Նապոլէոնի կինը և վրիկտոր Էմմանուէլի դուստրը, Կլոդիլտ Իշխանուհին, հասարակաց փրկութեան համար զոհուած այս իփիզենին : Կլոդիլտ կ'արթնցնէր և կը տանէր իրեն հետ գերեզման իտալիոյ ազատութեան բոլոր յիշատակները՝ որոնք վերջնականապէս պատմութեան կարգը կը մտնեն : Ու իտալիա նոր շրջանի մէջ մտած միջոց կը բռնուէր պատերազմի մը, որ ոչ միայն պիտի յայտնէր իր ոյժն ու կազմակերպութիւնը՝ իբր արդէն հասուանացեալ պետութիւն մը, այլ նաև պիտի շահեցնէր իրեն կրկին անգամ անլիկ երկրէ՛ր՝ քան որչափ որ չէր շահած իտալիոյ միութեամբը :

Տրիպոլիի պատերազմը այնքան յանկարծ ու վերահաս եղաւ, որ անոր պատճառները աւելի փնտռելու ենք առհասարական ձկտումներու և մերձադր պարագաներու մէջ քան իրական դէպքերու : Ար-